



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 1488/54 «30» օգոստոս 2017թ.

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ ՓՈՓՈԽՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2017 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

Հ ր ա մ ա յ ու մ ե մ .

1. Սույն թվականի սեպտեմբերի 1-ից ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի յուրաքանչյուր 1 դրույք ծանրաբեռվածությամբ հաստիքի ամսական դրույքաչափը բարձրացնել 10000 (տասը հազար) ՀՀ դրամով:
2. ԵՊՀ գլխավոր հաշվապահին՝ ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի հաստիքային ցուցակում կատարել համապատասխան փոփոխություն՝ յուրաքանչյուր 1 դրույք հաստիքի ամսական դրույքաչափը բարձրացնելով 10000 (տասը հազար) ՀՀ դրամի չափով:
3. ԵՊՀ կադրերի բաժնի վարիչին՝ մեկամսյա ժամկետում պրոֆեսորադասախոսական համակազմի հետ կնքված աշխատանքային պայմանագրերում և աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Հ ՍԻՄՈՆՅԱՆ